ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 231-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<--->> ———— 2022 թվականի N -------Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 231-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևերը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին» N 231-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.«Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի

պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշում է.».

2) որոշման թիվ 2 հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի տրամադրման կարգի.

ա.6-րդ կետում «ստուգաչափում» բառը փոխարինել «տրամաչափարկում» բառով,

բ.6-րդ կետի 6-րդ ենթակետում «հավաստագրի» բառից հետո լրացնել «կամ վկայականի» բառերը,

գ.6-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<4) հավատարմագրման վկայագրի պատճենը.>>.

3) որոշման, որոշման թիվ 1 և թիվ 2 հավելվածների ամբողջ տեքստերում <<հսկիչ սարքեր (թվային տախոգրաֆներ)>> բառերն իրենց հոլովաձևերով փոխարինել <<թվային տախոգրաֆներ>> բառերով.

4) որոշման թիվ 1 և թիվ 2 հավելվածների ամբողջ տեքստերում <<վարորդ>> բառն իր հոլովաձևերով փոխարինել <<ավտովարորդ>> բառով։

2. Սույնորոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի օգոստոսի 6-ին։